

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ	2
1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	5
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	7
2. Զարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ	8
3. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	9
3.1 Ծրագրեր և կատարողականություն -----	9
3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	10
3.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----	11
3.4 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն -----	11
3.5 Զարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	12

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 ապրիլի 2010թ., ՀՕ-51-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22(756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ ՀՀ-ում գործող հարկատեսակները բաժանվել են երկու խմբերի.

1. պետական հարկեր,
2. տեղական հարկեր:

Տեղական հարկերի խմբին դասվել են գույքահարկը, հողի հարկը և, որպես նոր հարկատեսակներ սահմանված, հյուրանոցա-

պես դրանց կիրառման դրույքաչափերի սահմանման, դրանց վճարողների իրավունքների, պարտականությունների ու վեճերի լուծման հետ կապված հարցերը:

Օրենքով սահմանվել է նաև, որ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերը, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկ-



յին հարկն ու տրանսպորտային միջոցների կայանատեղիի հարկը:

Միաժամանակ, օրենքում առանձին գլխով սահմանվել են նաև տեղական հարկերի առանձնահատկությունները, մասնավորա-

վող տույժերի և տուգանքների գումարները, որոնց հաշվառումը, վճարումների ընդունումը և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 ապրիլի 2010թ., ՀՕ-56-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22 (756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	2013թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ 2013թ. հունվարի 1-ից **դադարում են հաստատագրված վճարով հարկվել** հետևյալ գործունեության տեսակները.

- **խաղատների գործունեության կազմակերպումը,**
- **շահումով խաղային ավտոմատների շահագործումը**
- **ինտերնետ շահումով խաղերի կազմակերպումը:**

Միաժամանակ, օրենքում կատարված փոփոխությամբ ուժը կորցրած են ճանաչվել վերը նշված գործունեության տեսակների հաստատագրված վճարով հարկման առանձնահատկությունները բնութագրող օրենքի գլուխները:



Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 ապրիլի 2010թ., ՀՕ-57-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22 (756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	2013թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքի 15-րդ հոդվածում կատարված լրացմամբ 2013թ.-ի հունվարի 1-ից խաղատների գործունեության կազմակերպման, շահումով խաղային ավտոմատների շահագործ-

ման, ինտերնետ շահումով խաղատների կազմակերպման գործունեությունների կազմակերպումը ազատվում է ավելացված արժեքի հարկից:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 ապրիլի 2010թ., ՀՕ-58-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22 (756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	2013թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ խաղատների գործունեության կազմակերպումից, շահումով խաղային ավտոմատների շահագործումից, ինչպես նաև ինտերնետ շահումով խաղերի կազմակերպումից ստացվող եկամուտները «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով **եկամուտ**

չեն համարվում: Միաժամանակ, լրացում է կատարվել օրենքի 11-րդ հոդվածում սահմանելով, որ նշված գործունեության տեսակների կազմակերպման գծով կատարված ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ծախս **չեն համարվում:**

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18 մայիսի 2010թ, ՀՕ-72-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 26 (760), 16.06.2010թ.
Ուժի մեջ է	2011թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումով սահմանվել է, որ մաքսային մարմինները համագործակցում են այլ անձանց հետ ոչ միայն մաքսային գործի իրականացման, այլ նաև **օրենքով և այլ իրավական ակտերով իրենց վերապահված այլ լիազորությունների** իրականացման նպատակով:

Միաժամանակ սահմանվել է, որ բացի պետական, բանկային, առևտրային, ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններից նաև **ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները** մաքսային մարմինների կամ դրանց

պաշտոնատար անձանց կողմից **չեն կարող հրապարակվել**, օգտագործվել անձնական նպատակների համար, տրամադրվել երրորդ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ մաքսային մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք վերադաս մաքսային մարմնի թույլտվությամբ օրենքով սահմանված իրավասություն ունեցող երրորդ անձանց են տրամադրում համապատասխան տեղեկատվություն և փաստաթղթերի բնօրինակներ կամ պատճեններ:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18 մայիսի 2010թ, ՀՕ-74-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 26 (760), 16.06.2010թ.
Ուժի մեջ է	2011թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքի «Շահութահարկի արտոնություններ» գլխում կատարվել է լրացում՝ սահմանելով, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված Բյուրոն ազատվում է շահութահարկի վճարումից՝ Բյուրոյի կազմում ստեղծված Երաշխավորման ֆոնդին կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով, ներառյալ՝ այն եկամուտների մասով որոնք ստացվել են Երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից:



1.2 | ԶԳ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«ԶԳ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԶԳ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 ապրիլի 2010թ., N 522-Ն
Հրապարակումը	ԶԳ պաշտոնական տեղեկագիր N 22 (756), 26.05.2010թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է ներմուծողների մոտ առկա «2007» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմա-

վորման կարգը: **Սկսած 2010թ. հուլիսի 1-ից** ԶԳ-ում արգելվում է ԶԳ ներմուծված «2007» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԶԳ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	13 մայիսի 2010թ., N 537-Ն
Հրապարակումը	ԶԳ պաշտոնական տեղեկագիր N 22 (756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ շահող կտրոնների թվին են դասվում նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների տրամադրած կտրոնների հատուկ համարների թվերի վերջին նիշից սկսած՝ հաջորդական հերթականությամբ նույն որոշմամբ հաստատված կարգով սահմանված քանակով համընկած թվեր պարունակող կտրոնները:

Միաժամանակ որոշման 11-րդ կետում ավելացվել են նաև հատուկ համարի վերջին նիշից սկսած հաջորդական հերթականությամբ թվերը համընկելու դեպքում յուրաքանչյուր վիճակահանության համար նախատեսված բազային պարզևավճարի տրամադրման չափերը:



Փաստաթուղթ	«Մեկ մաքսային սահմանից մյուսը կամ մաքսային մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում մաքսային ծառայողների տեղափոխման կարգը սահմանելու մասին» ԶԳ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	27 մայիսի 2010թ., N 641-Ն
Հրապարակումը	ԶԳ պաշտոնական տեղեկագիր N 25(759), 09.06.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է մեկ մաքսային մարմնից մյուսը կամ մաքսային մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում մաքսային ծառայողների տեղա-

փոխման կարգը: Որոշմամբ հաստատված կարգով տրվել է ռոտացիայի սահմանումը, ռոտացիայի ենթակա մաքսային ծառայության պաշտոնների ցանկը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	27 մայիսի 2010թ, N 642-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 25 (759), 09.06.2010թ.
Ուժի մեջ է	2011թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Հանդիսանալով իրավաբանական և ֆիզիկական անձանց պետական գրանցման և հարկային մարմիններում հաշվառման կանգնելու գործընթացների բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների փաթեթի մի մաս՝ որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 17.01.08թ. «Հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը և դրանում պարունակվող տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N 28-Ն և ՀՀ կառավարության 17.01.08թ. «Հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման դիմումի ձևը և դրանում լրացման ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» N 40-Ն որոշումները: Նախատեսվում է, որ մինչ 2011թ. ՀՀ ԱԺ-ի կողմից կընդունվեն օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնց հիման վրա ներդրվելու է իրավաբանական և ֆիզիկական անձանց (բացառությամբ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, նոտարների և անհատ ձեռնարկատեր



չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց) ՀՀ պետական ռեգիստրի գործակալության ստորաբաժանումների կողմից «մեկ պատուհանի» սկզբունքով պետական գրանցման և ՀՎՀՀ-ների շնորհման միասնական գործընթաց:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 14-ի N 549-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	3 հունիսի 2010թ, N 673-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 26 (760), 16.06.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Լրացում է կատարվել ՀՀ կառավարության 14.04.04թ. «Նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ սահմանելու մասին» N 549-Ն որոշման մեջ՝ սահմանելով, որ ոչ միայն **թանկարժեք քարերի մշակման, այլ նաև /կամ/ թանկարժեք քարերի իրացման, ոսկերչական իրերի արտադրության և իրացման, թանկարժեք մետաղների արտադրության ոլորտներում** գործունեություն իրականացնող ընկերությունների համար հասույթը նվազեցվում է դրա ամբողջ մեծության չափով: Միաժամանակ որոշման նոր կետով սահմանվել է, որ **թանկարժեք մետաղների իրացման** գոր-



ծունեություն իրականացնող ընկերությունների համար հասույթը նվազեցվում է դրա ամբողջ մեծության **75 տոկոսի** չափով:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի ներկայացուցիչների կողմից հարկային հսկողության ընթացքում կազմվող տեղեկանքների և հաշվետվությունների ձևերը, դրանց կազմման և ներկայացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	20 ապրիլի 2010թ., N 825-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 13(365), 01.06.2010թ.

Համառոտ նկարագիր

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 18.02.10թ. «Հարկային մարմնի ներկայացուցիչների և հարկ վճարողների ընտրության, **հարկային մարմնի ներկայացուցիչների** նշանակման և ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպման



հարցերը կանոնակարգելու մասին» N 187-Ն որոշմանը համապատասխան՝ հրամանով հաստատվել է հարկային մարմնի ներկայացուցիչների կողմից ընթացիկ հարկային հսկողության ընթացքում **տեղեկանքների** և ընթացիկ հարկային հսկողության արդյունքների վերաբերյալ **հաշվետվությունների** կազմման և ներկայացման կարգը:

Միաժամանակ հրամանով հաստատվել են առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի և ապրանքների, մատուցվող ծառայությունների փաստացի ծավալների ու գների հաշվառման և ուսումնասիրության, ինչպես նաև փաստաթղթավորման, հաշվառման և գրանցման ընթացակարգերի ուսումնասիրության տեղեկանքների ձևերը:

2. ՀԱՐԱԿԻՑ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 ապրիլի 2010թ., ՀՕ-53-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22(756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքին համահունչ փոփոխություն է կատարվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում՝ սահմանելով «տեղական հարկեր» հասկացությունը:

Օրենքի 57-րդ հոդվածը խմբագրվել է՝ սահմանելով, որ համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքի բյուջեների՝ օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերից, այդ թվում՝ հարկային եկամուտներից՝ **տեղական հարկերից**:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27 ապրիլի 2010թ., ՀՕ-55-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22 (756), 26.05.2010թ.
Ուժի մեջ է	2013թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013թ.ից մի շարք գործունեության տեսակներ դադարում են գործել հաստատագրված վճարի գործունեության դաշտում, ինչպես նաև այդ գործունեության տեսակները համարվելու են ավելացված արժեքի հարկից ազատված գործունեություններ, և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվելու՝ համապատասխան փոփոխություն է արվել օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ կետում (վիճակախաղերի, շահումով խաղերի բնագավառ): Մասնավորապես սահմանվել են պետական տուրքի չափեր մինչև 100 մեքենայացված շահումով խաղերի սարքավորումների շահագործող շահումով խաղի կազմակերպ-

ման համար (տարեկան՝ բազային տուրքի 50,000-ապատիկի չափից մինչև 150,000-ապատիկը՝ կախված տվյալ տարածքի հեռավորությունը Երևան քաղաքից), ինչպես նաև մինչև 40 խաղասեղան շահագործող խաղատան կազմակերպման համար (տարեկան՝ բազային տուրքի 400,000-ապատիկից մինչև 1,200,000-ապատիկը):

Միաժամանակ օրենքի 19-րդ հոդվածում կատարված լրացումով սահմանվել է 100 և ավել շահումով մեքենայացված խաղերի սարքավորումներ շահագործելու, ինչպես նաև 40 և ավելի խաղասեղան շահագործելու դեպքում նրանց կողմից վճարվող պետական տուրքի չափը:

3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 | Ծրագրեր և կատարողականություն

3.1.1 | Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

I. Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.08.09թ. N 2504-Ա հրամանով ստեղծված Էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխումների խորհրդի շրջանակներում շարունակվում են աշխատանքները Էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ուղղությամբ: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.05.10թ. N1238-Ա հրամանով հաստատվել են **Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման** շրջանակներում մշակված տեխնիկական **առաջադրանքները**: Մասնավորապես մշակվել և հաստատվել են ՀԴՄ-ի, գրանցման գրքերի, դրամարկղային գրքերի հաշվառման ավտոմատացված վարման ծրագրի, ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի, հարկային հաշվետվություններն Էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացման համակարգի, Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրման ծրագրի, դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ հարկ վճարողների կողմից ներկայացված տեղեկությունների համադրման ծրագրի տեխնիկական առաջադրանքները: Վերը նշված տեխնիկական առաջադրանքների հիման վրա կիրականացվեն համապա-

տասխան ծրագրային ապահովման մշակման աշխատանքներ:

II. Հարկային հաշիվների դուրս գրման նոր կարգի ներդրում

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 21.05.10թ. N 1178-Ա հրամանով հաստատվել է հարկային հաշիվների դուրս գրման նոր կարգի ներդրման միջոցառումների ցանկը: 2010թ. ընթացքում իրականացվելիք միջոցառումները խմբավորվել են ըստ հետևյալ բաժինների.

1. | Ինտերնետային կապի միջոցով հարկային հաշիվների դուրս գրման համակարգ
2. | Բիլինգային համակարգ կիրառող հարկ վճարողների համար հարկային հաշիվների դուրս գրման համակարգ
3. | Առանց ինտերնետային կապի հարկային հաշիվների դուրս գրման համակարգ
4. | Հարկային մարմնից ստացված ձևերի լրացմամբ հարկային հաշիվների դուրս գրման համակարգ
5. | Դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների համադրման համակարգ

III. Հարկային մարմնում տերմինալների տեղադրում

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը, հետամուտ լինելով իր որդեգրած քաղաքականությանը, խրախուսում է հարկ վճարողներին, որպեսզի վերջիններս



տեխնիկական միջնորդավորված կապուղիները նախընտրեն այցելություններից՝ առավելագույնս նվազեցնելով «ՊԵԿ-հարկ վճարող» շփումը: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև նպատակ ունենալով մեծացնել հարկային օրենսդրության և այլ տեղեկատվության տարածման ծավալները նախատեսվում է հարկային տեսչություններում տեղադրել տերմինալներ: Տերմինալների առկայությունը հնարավորություն կընձեռի հարկ վճարողներին օգտվել տեղեկատվություն ստանալու ավելի մատչելի և հարմարավետ եղանակներից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն 04.06.10թ. հայտարարվել է բաց մրցույթ 2010թ. ընթացքում հարկային

ստորաբաժանումներում, մաքսակետերում և մաքսատներում տերմինալների տեղադրման, ծրագրային ապահովման և սպասարկման ծառայությունների նպատակով: Մրցութի անցկացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 29.05.10թ. նիստի 16 արձանագրությամբ հաստատված ՀՀ ԿԱ ՊԵԿ կարիքների համար տերմինալների ձեռք բերման տեխնիկական բնութագրերը և տերմինալների վրա տեղադրվող սարքավորումների տեխնիկական ցուցանիշները, ինչպես նաև ՀՀ կառավարության 25.03.10թ. «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համար տերմինալների և տեխնիկական միջոցների ձեռքբերման մասին» N 297-Ա որոշումը:

3.1.2 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի հունիսի 16-17-ն ապահովվել է մասնակցություն ք. Ժեշուվում, Լեհաստանի Հանրապետություն, կայացած աշխատաժողովին, որը նվիրված էր սահմանային հսկողության, սահմանների համալիր կառավարման ոլորտներում լավագույն փորձի փոխանակմանը:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են սահմանների համալիր կառավարման գաղափարը, սկզբունքները, այդ գործընթացում ընդգրկված տարբեր գերատեսչությունների դերակատարությունը, համագործակցության ուղիները և այլն:

Աշխատաժողովի շրջանակներում կատարվել է նաև այց լեհ-ուկրաինական սահմանային մաքսային կետ:



3.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

3.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.05.2010թ-ից մինչև 20.06.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից անցկացվել է թվով 4 ծառայողական քննություն, որի արդյունքում թվով 10 հարկային ծառայողներ ենթարկվել

են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից նույն ժամանակահատվածում լսվել է ընդամենը թվով 19 բողոք, որից բավարարվել է 2-ը, իսկ 17 բողոք մերժվել է:

3.2.2 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /մաքսային ծառայության մասով/

20.05.2010թ-ից մինչև 20.06.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից

մից անցկացվել է թվով 1 ծառայողական քննություն, որի արդյունքում թվով 1 մաքսային ծառայող ստացել է խիստ նկատողություն:

3.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

3.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 2010թ. սեպտեմբերի 6-ից կազմակերպում է «Հայաստանի հարկային համակարգ» ուսումնական դասընթաց 69 ակադեմիական ժամ տևողությամբ՝ բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիների համար: Դասընթացի նպատակն է բարձրացնել հարկային համակարգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը՝ հարկային ծառայությունում աշխատանքի

անցնել ցանկացողների, ինչպես նաև հարկային ոլորտի հետ առնչվող մասնագետների մոտ: Դասընթացն ունի տեղեկատվական և ուսուցողական բնույթ: Այն ընդգրկում է հարկերի և պարտադիր վճարների մասին ՀՀ օրենսդրությանը և ՀՀ-ում հարկային վարչարարությանը վերաբերող հարցերի ամբողջ պատկերը:

3.4 | Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն

3.4.1 | Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/

2010թ.-ի հունիս ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԾ «Թեժ գծով» ստացվել է շուրջ 1600 զանգ, որից 176 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզաբանության տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, հունիսի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանության առնչվող բազմաթիվ այլ հարցերի: Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզաբանության տրամադրման նոր կարգին և պայմաններին: Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար



քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.4.2 | Զետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Յունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը «Թեժ գծով» ստացվել է մոտ 400 զանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատ-

վություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Նշված ժամանակահատվածում որևէ բողոք և առաջարկություն չի արձանագրվել, իսկ «Թեժ գծով» օրական ստացված հեռախոսազանգերի քանակը միջինը կազմել է 10-15:

3.5 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր

3.5.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010 թվական		
		մայիս	հունվար-մայիս	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար մայիս) %
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ԶՎԶՅ ստացած հարկ վճարողներ	1149	6541	89.1
2	Զարկային մարմնի կողմից պետությունը հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	36,464.07	175,908.21	118.5
2.1	ԱԱԶ	9,239.3	38,724.3	148.8
2.2	Շահութահարկ	6,344.6	37,927.6	99.7
2.3	Ակցիզային հարկ	616.0	2,480.3	106.5
2.4	Եկամտահարկ	5,751.8	28,276.7	132.8
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9,443.7	45,215.2	116.8
2.6	Այլ	5,068.7	23,284.1	105.8
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	1729	9,833.0	93.2
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1,730.6	7,214.7	55.5

3.5.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		հունվար մայիս	մայիս	հունվար մայիս	մայիս	հունվար մայիս	մայիս
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	79,057	15,375	103,491	24,710	130.9	160.7
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	470,653	97,039	700,153	148,683	148.8	153.2
2.1	Արտահանում (մլն դրամ)	86,236	20,431	141,959	29,355	164.6	143.7
2.2	Ներմուծում (մլն դրամ)	384,417	76,608	558,194	119,328	145.2	155.8
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	11,180	2,683	11,723	3,854	104.9	144